

# ԵԶՆԻԿԻ ԵՐԿԻ ԲՆԱԳՐԱՅԻՆ ՄԻ ՔԱՆԻ ՆՈՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երեւանում հրատարակուող Պատմա-Բանասիրական Հանդէսի 1970 թուականի 2րդ համարում լեզուաբան Ա. Աբրահամեանը տպագրել է «Եղնիկի երկի բնագրային մի քանի մեկնաբանութիւններ» վերնագրով յօդուածը: Իր խկ ասելով, նա հիմնականում անդրադարձել է բանասէրների կողմից առաջարկուած մի քանի սրբագրութիւնների, «որոնք նպաստում են երկի էութեան պատշաճ բացայայտմանը: Սակայն —չարունակում է նա— այդպիսով խնդիրը սպառուած չի կարելի համարել, քանի որ դեռ կան պարզաբանման ենթակայ տեղեր, ինչպէս նաեւ եղած բանասիրական որոշ առաջարկներ ու մեկնաբանութիւններ վերանայման կարիք ունեն»<sup>1</sup>: Այս հարցում մենք համակարծիք ենք հեղինակին. Եղնիկի երկը (առ այժմ) բանասիրութեանը յայտնի է մէկ ձեռագրով, եւ բնագրային բոլոր սրբագրութիւններն ու մեկնաբանութիւնները հիմնուած են երկի բովանդակութեան ու նրա լեզուի ուսումնասիրութեան վրայ. ուստի ենթակայ են նորանոր քննութեան, մինչեւ որ համոզիչ դատեն: Այդ խկ տեսակէտից մենք քննութեան առանք Ա. Աբրահամեանի բոլոր «մեկնաբանութիւնները, առաջարկներն ու դիտողութիւնները, որ մի մասով նոր են առաջ քաշուած —ինչպէս դրում է նա—, մի մասով էլ ճշգրտւած, խորացնում կամ լրացուցիչ տուեալներով հիմնադրում են եղածները»<sup>2</sup>: Տեսնենք թէ որքանով են իրականացել այդ յայտարարութիւնները:

Նախ՝ մի քանի ընդհանուր դիտողութիւններ յօդուածագրին:

1. Նա բանասիրական լուրջ սխալ է դործել իր սրբագրութիւնների եւ մեկնաբանութիւնների համար հիմք ընդունելով Եղնիկի երկի 1826 թուականի հրատարակութիւնը (Վիննետիկ, Հ. Արսէն Բագրատունի), այդպիսով անտեսելով ուղղակի միակ ձեռագրից տպագրուած գիտական բնագիրը (Փարիզ, Լուի Մարիէսի եւ Շարլ Մերսիէի ջանքերով): Նոյն սխալը դործել էր նաեւ Վ. Զալոյեանը Եղնիկի երկի ուսերէն թարգմանութեան ժամանակ:

2. Լուրջ բանասիրութիւնը Ա. Աբրահամեանից պահանջում էր, որ սրբագրութիւններ կամ մեկնաբանութիւններ վերանայելիս նա ընթերցողին ժամանակագրական կարգով ներկայացնէր. դրանց մասին արտայայտուած բոլոր կարծիքներն իրենց հեղինակներին անուններով, որքան նրան յայտնի են՝ Եղնիկի առաջին հրատարակիչները (Ձմիւռնիս, 1762), երկրորդ հրատարակիչը, Յլրրիվալ, Դիւլորիէ, Շմիդ—Գալէմքեաբեան, Վեբեր, Ն. Նահապետեան, Հր. Աճառեան, Ե. Դուրեան, Ն. Աղոնց, Ե. Փէչիկեան, Ն. Բիւզանդացի, Բ. Կիւլէսէրեան, Գ. Պաչատուրեան... Այս հարցում թերացումները յօդուածագրի ուղղամտութեան կամ բանասիրական գիտելիք-

<sup>1</sup> Պատմա-Բանասիրական Հանդէս, 1970, թ. 2, էջ 94-95:  
<sup>2</sup> Նոյն տեղում, 108:  
<sup>3</sup> EZNIK DE KOLB. "De Deo". Edition critique du texte armenien, par † Louis Mariès et Ch. Mercier. Paris, 1959. Patrologia Orientalis, t. XXVIII, fasc. 3.

ների պակասի նշան են: Այս տեսակետից նրա ջննադատութեան մէջ յատկապէս «տուժել» է Ֆրանսացի երախտաւոր Հայազէտ Լուի Մարիէսը, թէեւ նրան յայտնի են վերջինիս եզնիկագիտական լուրջ ուսումնասիրութիւնները<sup>4</sup>, էլ չենք ասում Եզնիկի երկի գիտական քննադրը եւ Ֆրանսերէն արժեքաւոր թարգմանութիւնը, որոնք լուսաբանուած են Հարիւրաւոր Ծանօթագրութեան ներքէ մէջ: Գիտական, վերջին հրատարակութիւնը թողած՝ Ա. Արբաճամբեանը ժամավաճառ է եղել կարծիքներ ջննադատելով կամ «Հիմնաւորելով», յաճախ առանց իր նպատակին հասնելու:

3. Ա. Արբաճամբեանի յօդուածում իշխում է պէտք էջների ոճը եւ իրեն նախապատուութիւնը տալու ճղտումը. Եզնիկի բնագրի այս կամ այն տողը սրբադրելիս նա յատարարում է, թէ ճիշդն այսպէս պէտք է լինի. սակայն յետոյ պարզուում է, որ նա լուի լուեայն հետեւող է որեւէ բանասէրի, որի անունով պէտք է ներկայացնէր այդ տեսակէտը:

Այս ընդհանուր դիտողութիւններից յետոյ, որոնց ճշգրտութեան ընթացքը անձամբ կարող է համոզուել ստորեւ, անցնենք Ա. Արբաճամբեանի 14 պարագրութիւնների եւ մեկնաբանութիւնների մէջ մէկի ջննութեան:

1. Եթէ այնպիսի ինչ քննադատ մարդոյն առնայ էր, ապա ոչ ի բնութեանէ արարածոյն կ'ուստուածեղէն գրոց նմա վարդապետութիւն ընծայանայր՝ որպէս ասէ ուրիշ պատուածական բարբառն, եթէ ի մանկութենէ մարդիկ ի ինամս չարի միտեալ են. զի ցուցցէ թէ որ միտին՝ կամաք միտի, եւ ոչ ուրուք բռնութեամբ<sup>5</sup> (Մ 24. 21-25, Բ Աժա 44):

Ա. Արբաճամբեանը գրել է, թէ սկզբից մինչեւ առջին միջակէտն ընկած մասում «աղաւաղում կալ... Սա Հասկանալի չէ եւ որամբարնօրէն չի կապուում շարունակութեան հետ», այսինքն՝ միջակէտից յետոյ եկող մասի հետ, որ, դարձեալ նրա կարծիքով, «կանոնաւոր է ու Հասկանալի, ի հարկէ առանձին վերցրած: Սակայն առաջին մասի պատճառով անկապ ու անտրամաբանական է դառնում ամբողջ Հատուածը: Ուրեմն Հասկանալի դարձնելու Համար պէտք էր վերակազմութիւն կատարել»<sup>6</sup>: Թէեւ նա իսկոյն չի ստում, բայց պարզուում է, որ առաջին անգամ Գր. Գալէմբեարեանն է որտալայտել այս կասկածը. ուստի նա վերյիշեցրել է նախ վերջինիս «վերակազմութիւնը», սակայն չբաւարարուելով գրանով՝ «վերավերակազմել է» Եզնիկի նախադասութիւնը, մինչեւ որ «ցանկալի արդիւնքն ստացուի»(?):

Գր. Գալէմբեարեանը աղաւաղուած է համարել վերյիշեալ Հատուածի սկիզբը եւ ըստ այնմ ընդմիջարկել Մեթոդիոս Օլիմպիացու «Վասն անձնիշխանութեան» յունարէն երկից իր իսկ գրաբար թարգմանած հետեւեալ բառերը<sup>7</sup>, որոնք ընդգծուած են. «Եթէ այնպիսի ինչ քննութիւն՝ մարդոյն

<sup>4</sup> LOUIS MARIÉS. Le DE DEO d'Eznik de Kolb connu sous le nom de "Contre les sectes" Paris, 1924; Etude sur quelques noms et verbes d'existence chez Eznik, Paris, 1928.

<sup>5</sup> Բնագրային մէջբերումները կատարելով Խանգրձ Եզնիկի գիտական հրատարակութիւնը (Մ), ճշում եմք ման. Վեցերիկի առաջին հրատարակութեան գիրքը, գրույթն ու էջը (Բ):

<sup>6</sup> Պատմա-բանասիրական Հանդէս, 95:

<sup>7</sup> Գր. Գալէմբեարեանի սրբագրութիւնը տե՛ս «Նորագոյն աղբիւրք եզնիկայ Կողոստայի Հնդդէմ աղանդից մատենիք», Վիեննա, 1919, 64:

<sup>8</sup> Յօդուածագիրը սխալմամբ արտագրել է «քունութեամբ», որ անմիջապէս մի տող վեւրեւում է, եւ իր սխալը գործառնալից Վերագրելով Գր. Գալէմբեարեանին՝ գրել է. «Եւրջնիք ման, որ «քունութեան» խոսք էլ ի գուր է փոխուած գործիակամով» (էջ 95):

առեալ էր, ապա ոչ յուրում վարդապետութեմէ մնա դիպէր անաստութիւնն, այլ՝ ի բնութենէ արարածոյ...»: Շարունակութիւնը՝ ինչպէս Եզնիկի երկում, բայց «արարածոյ» բառից յետոյ նա դրել է վերջակէտ: Մեր կարծիքով, այս միջմատութիւնն աւելորդ է, քանի որ առանց դրան էլ Եզնիկի միտքը հասկանալի է եւ նախադասութեան կառուցուածքը կանոնաւոր, ինչպէս կը տեսնենք ստորեւ Մարիէսի կարծիքին ծանօթանալիս:

Ա. Արբահամեանն աւելի է առաջ տարել այդ սրբագրութիւնը. «արարածոյ» բառից յետոյ Գր. Գալէմքեարեանի դրած վերջակէտը փոխարինել է ստորակէտով, «ընծայանայր» բայից առաջ դրել է (ոչ) եւ ամբողջ նախադասութիւնը խմբագրել է հետեւեալ ձևով<sup>10</sup>. «Եթէ այնպիսի ինչ բնութիւն մարդոյն առեալ էր, ապա ոչ յուրում վարդապետութեմէ մնա դիպէր անաստութիւնն, այլ ի բնութենէ արարածոյ (,)»<sup>11</sup> եւ յաստուածեղէն գրոց նմա վարդապետութիւն (ոչ) ընծայանայր»: Շարունակութիւնը թողել է ինչպէս Եզնիկի երկում է, եւ «վարդապետութիւն» բառը նոյն նախադասութեան մէջ իւրովի մեկնարանելով նախ՝ որպէս «Հրահրում» եւ ապա՝ «ձեւակերպում», նա թարգմանել է. «Եթէ մարդն այդպիսի չար<sup>12</sup> էութիւն ստացած լինէր (այսինքն՝ ի բնէ չար էութեամբ ստեղծուած լինէր), ապա անհնազանդութիւնը նրա մէջ երեւան կու գար (բառացի՝ նրան կը հանդիպէր) ոչ թէ մէկի հրեպիումից, այլ (իր իսկ) արարածային էութիւնից, եւ Աստուածաշունչը գրբում էլ դրա վերաբերեալ (այնպիսի) ձեւակերպում չէր տրբւի, ինչպէս մի տեղ աստուածային խօսքով ասում է՝ «Մարդիկ մանկութիւնից հակուած են դէպի չարիք», որպէսզի ցոյց տրուի, թէ ով հակուած է, կամ ովին է հակուած եւ ոչ թէ մէկի բունութեամբ»:

Նախ՝ մեր դիտողութիւնները այս թարգմանութեան մէջ ընդգծած բառերի մասին.

ա) Եզնիկի «Եթէ այնպիսի ինչ բնութիւն» բառերը թարգմանելիս Ա. Արբահամեանը սխալ մեկնաբանելով բնագրի «այնպիսի» դերանունը, աւելացրել է «չար» ածականը: Բայց մեզ թւում է, եւ ինչպէս ասուած է Եզնիկի քննական հրատարակութեան մէջ (Ման. 161), Եզնիկը «այնպիսի» դերանունով նկատի է ունեցել մարդու անհնազանդ, «աստուզանող» եւ ոչ թէ չար բնութիւնը. նա մի քանի տող վերելում այս մասին յատկապէս գրել է. «Եւ դարձեալ ոչ յարարչէն, այլ յանաստութեմէ դիպեալ ստուգանողին, եւ յուրուք վարդապետութենէ դրդեալ. զի ոչ եթէ այնպիսի ինչ Հաստատեալ բնութեամբն զմարդն... կարէ ոք ցուցանել» (Մ 24. 17): Հետեւաբար ճիշդ չէ նաև թարգմանութեան մէջ փակագծերում առնուած «ի բնէ չար էութեամբ» մեկնաբանութիւնը:

բ) «Երեւան կու գար» բայը գրաբար «դիպէր» բայածինի ճիշդ թարգմանութիւնը չէ, չունի վերջինիս պատահականութեան, պատահելու նրբերանգը: Եթէ մարդն ի բնէ անհնազանդ ստեղծուած լինէր, ապա որքանով ճիշդ կը լինէինք, եթէ ասէինք, թէ «նրա մէջ անհնազանդութիւնը եւ»

<sup>9</sup> Հակոտակ Գր. Գալէմքեարեանի, յօդուածագիրը չի ընդգծել այս բառը, քերեսու իրեն վերագրելով:

<sup>10</sup> Պատմա-Բանասիրական Հանդէս, 95:

<sup>11</sup> Ա. Արբահամեանը Գր. Գալէմքեարեանի վերջակէտը փոխարինել է ստորակէտով:

<sup>12</sup> Ընդգծում ենք այն բառերը, որոնց մասին դիտողութիւններ ունենք:

րեւան եկաւ»։ չէ՞ որ մարդն էութեամբ այնպիսին էր։ Առ նուազն պէտք էր աւելացնել «պատահարաբար մակրայր»։

Գ) Մեզ բռնադատելի է թուում եւ Նոր Հայկազեան բառարանում չրկայ «վարդապետութիւն» գոյականի «հրահրում» եւ «ձեւակերպում» երկիմաստ առումը Եղնիկի նոյն նախադասութեան մէջ, աւելի ճիշդ՝ Գր. Գալէմբեարեանի աւելացրած հատուածում եւ Եղնիկի բնագրում. այդ բառը երկու դէպքում էլ նշանակում է «վարդապետութիւն, ուսուցում, սովորեցնելը»։

Պ) Ի՞նչ կարիք կար «որպէս ասէ ուրեք աստուածական բարբառն» նախադասութիւնը թարգմանել «ինչպէս մի տեղ աստուածային խօսքով ասուում է» եւ ոչ թէ ուղղակի՝ «աստուածային խօսքը (կամ՝ ձայնը) ասում է», ինչպէս բնագրին է թելադրում։ Նոյնպէս եւ բնագրի «գի ցուցցէ» բայը թարգմանուել է «որպէսզի ցոյց տրուի», եւ ոչ թէ «որպէսզի ցոյց տայ» Աստուած կամ աստուածային խօսքը, որից, կարծէք, խուսափում է Ա. Արբահամեանը։

Անկախ այս թարգմանական թերութիւններից, մեզ աւելորդ է թուում Գր. Գալէմբեարեանի եւ Ա. Արբահամեանի միջամտութիւնը Եղնիկի ընդգրկւած Առաջինի սրբագրութիւնն իբր հիմնուած է Մեթոդիոսի երկի վրայ. բայց վերջինիս եւ Եղնիկի նրա իսկ առադրումները ցոյց են տալիս, որ այսուտեղ Եղնիկը չեղուել է իր աղբիւրից։ Իսկ Ա. Արբահամեանը միջամտել է, որպէսզի իրեն «ցանկալի արդիւնքը ստացուի», իր բառերով ասած։

Որո՞նք են այդ սրբագրութիւնների թերութիւնները։

Երբ խորն ենք մտածում, տեսնում ենք որ «Եթէ այնպիսի ինչ բռնութիւն մարդոյն ստեալ էր, ապա ոչ յարուս վարդապետութիւնն ունա դիպէր անաստութիւնն, այլ ի բնութենէ արարածոյ» ընդգծուած նախադասութեան մէջ, որ աւելացրել է Գր. Գալէմբեարեանը, «գիպէր» (պատահէր, պատահարաբար երեւան գալ) բայը տեղին չի գործածուել։ Եթէ մարդն ի բնէ անհնազանդ ստեղծուած լինէր, անհնազանդութիւնը նրա մէջ պատահաբար երեւան չէր գար։ Բայց քանի որ մարդն ստեղծուած էր անձնիշխան, ուստի անհնազանդութիւնը նրա մէջ երեւան եկաւ նրա արարածային բնութիւնից։ Մարդ արարածը սխալական էր, կարող էր սխալուել եւ այդպիսով չհնազանդուել աստուածային պատուիրանին. դա բխում էր նրա արարածային էութիւնից։ Այս նկատի ունենալով՝ Աստուածաշունչը գրել է, թէ մարդիկ մանկութիւնից հակուած են չար գործելու։ Ընդհակառակն, եթէ մարդն ի բնէ անհնազանդ ստեղծուած լինէր, ապա նրա անհնազանդութիւնը կը բացատրուէր նրա էութեամբ եւ Աստուածաշունչն էլ այդ մասին «ձեւակերպում չէր տայ», ինչպէս ասում է Ա. Արբահամեանը։ Արդ, քանի որ այդպէս չէ, ուստի հասկանալի է Եղնիկի գրածը. «Եթէ այնպիսի ինչ բնութիւն մարդոյն ստեալ էր, ապա ոչ ի բնութենէ արարածոյ եւ յաստուածեղէն գրոց նմա վարդապետութիւն ընծայանայր», այսինքն՝ եթէ մարդն ստացած լինէր այնպիսի (այն է՝ անհնազանդ, ստունդանող) բնութիւն, ապա նրա արարածային բնութիւնից եւ աստուածային Գրքից բխող վարդապետութիւն կամ ուսուցում չէր ընծայուի կամ տրուի նրան։

Մեզ թուում է, որ Ա. Արբահամեանի աւելացրած «ոչ» ժխտականը չի արդարացում։ Ըստ նրան, «ընծայանայր բայաստորագեան էլ ժխտական ձեւով պէտք է լինի՝ ոչ ընծայանայր։ Ըստ երեւոյթիս, վերը եղած ոչ ժխտական մասնիկը վերաբերել է ընծայանայր բային, երբ յիշեալ նախադասութիւնը դեռ ազաւաղումով առանձնացուած չի եղել» (էջ 95)։ Մենք կարծում ենք, որ դա ճիշդ չէ։ Կարձեալ մէջ բերենք Գր. Գալէմբեարեանի եւ Ա. Արբահամեանի միացեալ ուժերով վերակառուցուած նախադասութիւնը, եւ

կը տեսնենք, որ այդ ժխտական մասնիկը բարական հեռու է այն բայից, որ  
 բին եւս նա պէտք է վերաբերէր, ըստ Ա. Արքահամեանի. «Եթէ այնպիսի ինչ  
 բնութիւն մարդոյն առեալ էր, ապա ոչ (յուրուք վարդապետութենէ նմա դի-  
 պէք անսաստութիւնն, այլ) ի բնութենէ արարածոյ եւ յաստուածեղէն գրոց  
 նմա վարդապետութիւն (ոչ) ընծայանայր»: Ա. Արքահամեանն ինքը համոզ-  
 ուած չէ իր ասածի մէջ. այլ բան է «Ըստ երեւոյթիմ վերը եղած ոչ ժխտա-  
 կան մասնիկը վերաբերել է ընծայանայր բայաստորոգեալին» եւ այլ՝ այդ  
 ժխտական մասնիկն աւելացնել բայից առաջ, թէ եւ Ա. Արքահամեանը հա-  
 ւատացած է, թէ Գր. Գալէմքեարեանը վերացրել է յիշեալ նախադասութեան  
 աղաւաղումը եւ ինքն էլ նրա վերջակէտը փոխարինելով ստորակէտով՝ յիշ-  
 եալ նախադասութիւնը «արամաբանօրէն կապել է շարունակութեան հետ»,  
 բայց զգալով անշուշտ այդ կապի թուլութիւնը մի կողմից՝ անհրաժեշտ է  
 համարել ոչ ժխտական մասնիկն աւելացնել ընծայանայր բայից առաջ, հա-  
 ւանաբար նկատելով միւս կողմից՝ որ «վերը եղած ոչ ժխտական մասնիկը»  
 («ոչ յուրուք») շատ է հեռու «ընծայանայր» բայից եւ չի կարող նրան էլ վե-  
 րաբերել առանց կրկնուելու: Նկատենք նաեւ, որ «ոչ յուրուք» բառակապակ-  
 ցութեան մէջ ժխտական մասնիկը վերաբերում է յարակից դերանունան (որ  
 Ա. Արքահամեանը թարգմանել է «ոչ թէ մէկի») եւ ոչ թէ նախադասութեան  
 զդիպէր» բային. ուստի սա եւս մի պատճառ է, որ դերանունան վրայ դրուած  
 այդ նոյն ժխտական մասնիկը առանց կրկնուելու չէր կարող Եզնիկի բնազ-  
 րում երկրորդ անգամ վերաբերել մի բայի:

Իր այս առաջին սրբազրութեան վերջում Ա. Արքահամեանը գրել է,  
 թէ Եզնիկի մէջըբերումը կատարուած է Մննդ. Ը 8ից, բայց որոշ բառերի  
 համար: Գրքի բնագիրն այլ է: Նա դրացել է յիշեցնել, որ այդ միտքը կամ  
 դիւտը իրենը չէ, որ իրենից առաջ այդ աղբիւրը նշել է եւ մէջ բերել Գր.  
 Գալէմքեարեանը<sup>13</sup>:

Մի ուրիշ զլացում. «Յիշենք ազրել է Ա. Արքահամեանը, որ Եզնիկի  
 երկի համապատասխան հատուածին անդրադարձել է նաեւ Ն. Աղունցը» (96):  
 Մեր հերթին պիտի յիշեցնենք ընթերցողին, որ Եզնիկի բնագրի այդ տեղին  
 եւ Գր. Գալէմքեարեանի սրբազրութեանը Աղունցից առաջ անդրադարձել է  
 Նուի Մարիէսը նախ՝ իր «De Deo» աշխատութեան (1924, էջ 104-112), ապա  
 Երկրորդ անգամ Եզնիկի գիտական հրատարակութեան 154րդ ծանօթութեան  
 մէջ:

Մարիէսն ու Մերսիէն, ի տարբերութիւն Գր. Գալէմքեարեանի, Եզ-  
 նիկի այդ հատուածում ոչ մի աղաւաղում չեն նկատել եւ գիտական հրատա-  
 րակութեան մէջ անփոփոխ են թողել ձեռագրի բնագիրը ու թարգմանել այս-  
 պէս.

“Si nature de cette sorte, l’homme avait reçue, conséquem-  
 ment, point ne lui eût été, de par nature de créature et de par  
 divines écritures, doctrine offerte; comme dit quelque part la divine  
 parole: ‘Dès l’enfance les hommes à s’occuper du mal sont enclins’,  
 pour montrer que, qui incline, c’est par volonté qu’il incline, et point  
 par contrainte de quelqu’un” (p. 28-29)

Այսինքն՝ «Եթէ մարդն բայպիսի բնութիւն ստացած լինէր, ապա  
 նրան վարդապետութիւն ընծայուած չէր լինի արարածային բնութեամբ եւ

<sup>13</sup> Գր. Գալէմքեարեան, Յշ. աշխ., 64, ծան. 3:

աստուածային գրքով. ինչպէս մի տեղ աստուածային խօսքն ասում է, թէ մարդիկ մանկութիւնից միտում ունեն չարով գրադուելու, որպէսզի ցոյց տայ, թէ ով Հակում է, կամովին է Հակում, եւ ոչ թէ մէկի բռնութեամբ: Եւ 163րդ ծանօթութեան մէջ թարգմանիչները նշել են, որ մարդկանց՝ շարին միտելու վարդապետութիւնը հիմնուած է թէ՛ տրամաբանութեան վրայ, քանի որ մարդկային բնութիւնը կատարեալ չէ, եւ թէ՛ աստուածային խօսքի վրայ՝ «ի մանկութենէ մարդիկ ի խնամս չարի միտեալ են» (Մննդ. Ը. 21): Եթէ մարդիկ Աստուծոց ստացած լինէին ստունդանող կամ անհնազանդ բնութիւն, ապա նրանց սխալականութեան կամ Աստուծու պատուիրաններին չհնազանդելու հնարաւորութիւնը մարդկային բնութիւնից բխող եւ Աստուածանշուձ պրանցիւլում ոչ մի վարդապետութեամբ չէր բացատրուի, այդպիսի վարդապետութիւն չէր ներկայանայ կամ չէր ընծայուի մարդուն՝ «ոչ ընծայանալը նմա»: Մեզ թուած է, որ Մարիէսի ու Մերսիէի թարգմանութիւնը Հասկանալի է եւ, հետեւաբար, Եզնիկի բնագիրն այստեղ սրբագրութեան կարելի չունի:

Մարիէսի կարծիքով Եզնիկի բնագիրը թերի է ոչ թէ մեզ հետաքրքրող նախադասութեան մէջ, այլ դրան նախորդող տողում՝ «Զի ոչ եթէ այնպիսի ինչ Հաստատեալ զմարդն ցուցանել» (Մ 24. 18, Բ. 44. 6): Գիտական հրատարակութեան 160րդ ծանօթութեան մէջ նա գրել է. «Զետեղրում ցալցանի—ից յետոյ նախադասութիւնը առկախ է մտում: Վենետիկի հրատարակութիւնը առանց դրուայնելու աւելացրել է «կարէ ոք», որ իմաստը պահանջում է ի հարկէ: Սակայն մտում է իմանալ, թէ միայն «կարէ ոք»-ն է պահասում այստեղ: Մեթոդիստի յունարէն բնագիրը ենթադրել է տալիս, թէ զրիչը հաւանաբար մի բառից նման բառին անցնելիս բաց է թողել նախադասութեան ամբողջ երկրորդ մասը: Ըստ յունարէն բնագրի, բայց ի հարկէ ենթադրաբար, իմաստի տեսակէտից մենք վերականգնեցինք դուրս ընկած այդ երկրորդ մասը՝ «զի ոչ եթէ այնպիսի ինչ Հաստատեալ բնութեամբ զմարդն ցուցանել, [այլ զի զմարդն՝ ըստ ուրուք վարդապետութեան, եւ ոչ բռնութիւն...»: Ենթադրաբար իր վերականգնած բառերի տակ Մարիէսը նշել է Մեթոդիստի յունարէն Համապատասխան բնագիրը: Ծանօթութեան շարունակութեան մէջ նա գրել է նաեւ. «[ ] բացթողումը կարելի է բացատրել ցուցանի—ից ցուցանի անցումով: Եւ ըստ այնմ բաց թողնուած մասում հաւանաբար առաջին անգամ յիշատակուել էր «բռնութիւն» բառը. Եզնիկը այդ մտքին յետոյ անդրադարձել է երկու անգամ՝ բռնութեամբ (էջ 94. 25) ու եւ ոչ բռնադատիչ (24. 28), դրա վերաբերեալ աւելացնելով Համառոտ բացատրութիւններ, որոնք Մեթոդիստի երկում բոլորովին չկան»:

Ստորեւ կը տեսնենք, որ Ա. Աբրահամեանը յանախ է անտեսել Մարիէսի կարծիքը ընթերցողի առաջ, լուրեայն իւրացնելով այն:

2. Իսկ եթէ ոք յոչինչ զԱստուծոյ զպատուիրամսն համարիցի, յարժամ մրցել ընդ բանարկուրն մարտնչիցի՝ վազվազակի կարծանի (Մ 29-30, Բ 58. 3) նախադասութեան «մարտնչիցի» բայի փոխարէն ձեռագրում կարդում ենք «մարտ չիցի», որ Ա. Բագրատունին Վենետիկի հրատարակութեան մէջ դարձ ձրել է «մարտնչիցի», որին Հասանութիւն է տալիս Ա. Աբրահամեանը: Գր. Գալէմբեարեանը (որի անունը չի յիշատակել յօդուածագիրը), Ե. Իուրեանը, Հր. Աճառեանը եւ Գ. Սալատուրիանը<sup>14</sup> ձեռագրի ընթերցումը սրբազ-

14 Եւ ոչ թէ «եսչայտրեան», ինչպէս ամէմ անգամ գրել է Ա. Աբրահամեանը:

րել են «մատչիցի»։ Յօդուածագիրն հոս նշել է նաև Մարիէսի անունը եւ նրա ընդունած ընթերցումով՝ «մարտնչիցի», այսինքն՝ տպագրինը, բայց առանց գիտական հրատարակութեան 213րդ ծանօթութեան մէջ տրուած պատճառարանութեան, որ հետեւեալն է. «Աճառեանը, էջ 86-87, Գալէմքեաբուեանը, էջ 54, ծան. 198 (Շմիդի գերմաներէն թարգմանութեան, որին աշխատակցել է նաև Գալէմքեաբուեանը ... Մ. Մ.), Պաշտուրեանը, էջ 28, կարգացել են «մատչիցի», փոխանակ ձեռագրի «մարտ շիցի» ընթերցումով։ Սակայն «մարտնչիցի»ն, որ Վենետիկի հրատարակութեան սրբազրութիւնն է, կարծէք աւելի լաւ է։ «Մարտնչիմ» բայը, որ պարզապէս նշանակում է «combattre, engager le combat» (մարտնչել, մարտի դուրս գալ) կրկնակի դործածուած չի լինում «մրցել»ի հետ, որ իր մէջ ունի «մրցութեան, մրցոյթի» («competition») զաղափար։ (Չեռագրում) «մարտ» եւ «չիցի» բառերի միջև նկատուի է մէկ տառի չափ դատարկ տեղը։ Իսկ Ա. Աբրահամեանը այս փաստի մասին համարած կորէն գրել է. «Բնաը կիսուած է, եւ մ տառի տեղը երեւում է» (97)։ Նրա ինքնափաստութիւնը, արտայայտուելու վարդապետական ոճը, ի տարբերութիւն Մարիէսի համեմատութեան, իշխում են նրա ամբողջ յօդուածում։ Բայց ի՞նչ եւ է։

Ե. Գուրեանը Հայերէն չի համարել «մրցել...մարտնչիցի» արտայայտութիւնը։ Եւ ահա Ա. Աբրահամեանը դարձեալ ինքնափաստ հայտարարել է. «Ե. Գուրեանը սխալուել է այդ ոճը ոճը Հայերէն չհամարելով։ Բանն այն է, որ դասական Հայերէնի համար ոչ միայն խորթ չէ, այլևս սիրուած եւ ընդունուած է բայի դիմաւոր ձևի վրայ նոյն կամ հոմանիշ բայի անորոշ դերբայը դնել՝ որպէս աւելագրութիւն» (97)։ Քերականական այս երևույթը իրօք կայ դարբարում, միայն թէ Ա. Աբրահամեանի բերած մի քանի օրինակները ամենեւին չեն վերաբերում դրան։ Ահա նրա վկայութիւնները. «Շիննի շիննիմ ի պաշտօն դիւայ...» (Ազարթ., 293). Ա. Աբրահամեանը չի թարգմանել բերուած օրինակը. մեզ թւում է, որ այստեղ անորոշ դերբայը պարզապէս սաստկացնում է դիմաւոր բայի իմաստը, արտայայտում է դործողութեան շարունակականութիւնը, եւ նախադասութիւնը կարելի է թարգմանել «հա՛ շինում էին ու շինում»։ Պօքը յայտնի աշտարակաշինութեան մասին է։ Ա. Աբրահամեանի միւս օրինակն է. «Այս ամենայն ի ձեռն այլոց՝ գրել գրեցաւ» (Բուզ., 3րդ, Ա), որ Ստ. Մալխասեանը ճիշդ է թարգմանել. «արդէն գրուեց»։ Ուստի անորոշ դերբայն այստեղ դործողութեան կատարուած կերպն է ցոյց տալիս յարակից անցեալ կատարեալի հետ։ «Աճել բազմացաւ» (Բուզ., 3րդ, Գ) վկայութիւնը Ստ. Մալխասեանը պարզապէս թարգմանել է «աճեցին ու բազմացան»։ Ուստի բերուած օրինակներում անորոշ դերբայները նիւթական իմաստից զուրկ են եւ պարզապէս արտայայտում են դիմաւոր բայի այս կամ այն կերպային նրբերանգը։ Հակառակ յօդուածաւորի, մենք գտնում ենք, որ Շիննիկի «մրցել...մարտնչիցի» բայերը այդպիսի դործածութիւններից չեն, եւ ոչ էլ իրը «մրցել»ը անորոշ դերբայի ձևով գրուած է մարտնչիցի դիմաւոր ձևի վրայ «կուռել» նշանակութեամբ որպէս աւելագրութիւն» (97)։ Ինչպէս Մարիէսն է գրել, այդ երկու բայերն ունեն իմաստային նրբերանգներ, եւ «յորժամ մրցել ընդ բանսարկուին մարտնչիցի» նախադասութիւնը ճիշդ կը լինի թարգմանել «երբ մրցելու համար ... il vient a engager le combat...» (Մարիէս-Մերսիէ, էջ 34) եւ ոչ թէ լուկ քրանսարկուի հետ կուռելիս։ «Մրցել...մարտնչիցի» նախադասութեան մէջ անորոշ դերբայը նպատակի պարագայ է, իսկ Ա. Աբրահամեանի բերած օր-

\* \* \*

նահանգում նոյնպիսին չեն անորոշ դերբայները, ինչպէս տեսանք: Հետեւեալ վկայութիւնները բերում ենք, ցոյց տալու համար, որ «մրցիմ» եւ «մարտնչիմ» բայերը գրաբարում այնքան էլ սերտ հոմանիշներ չեն, որքան կարծում է Ա. Աբրահամեանը, եւ դրանցում չի կարելի «մարտնչիմ» բայը փոխարինել «մրցիմ» բայով:

Առաջին օրինակ. Երբ Քրիստոս ասում է Հրեաներին. «Եթէ ոչ ուտիցէ ի հացէ յայսմանէ, կեցցէ յաւիտեան. եւ հացն զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի» (Յովհ.՝, Զ, 52), Հրեաները դայթակղւում են եւ սկսում խօսքով վիճել, խօսքով կռուել եւ ոչ թէ մրցել իրար հետ. «Մարտնչէիմ Հրեայքն եւ ասէին, Զիա՞րդ կարէ սա տալ մեզ դմարմին իւր յուսել» (Զ, 53):

Երկրորդ օրինակ. Երբ Պիղատոսը հարցաքննում է Քրիստոսին, սա պատասխանում է. «Իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէ. եթէ յաշխարհէ աստի էր արքայութիւնն իմ, սպասաւորքն իմ մարտնչէիմ արդեւք, զի մի մասնեացայ Հրէից» (Յովհ.՝, ԺԸ, 36). Քրիստոսի սպասաւորները ոչ թէ կը մրցէին (ս՞ա հետ), այլ կը մարտնչէին, կռուի զուրս կու դային, կը կռուէին Հրեաների դէմ:

Այսպիսով տեսնում ենք, որ Ա. Աբրահամեանը պարզապէս համարակարծիք է, թէ եւ ուշացած, Վենետիկի, Գ. Պաշտուրեանի եւ գիտական հրատարակութիւններին. իսկ ինչ վերաբերում է ընդունուած կարծիքը կամ օրբադրութիւնը «խորացնելու կամ լրացուցիչ տուեայներով հիմնաւորելու» նրա խոստովին, ապա պիտի ընդունենք, որ ոչ միայն նա չի հասել իր նպատակին, այլ խառնել է գրաբարի քերականութեան երկու տարբեր իրակութիւններ:

3. Եւ այն յԱստուծոյ արժանիցն յիրաւի լինի. զի երօզ ոմն զԱստուած, գութրքս, զպահս, զազուրքս, եւ ի կախարդն՝ որ եւ անձիմ չկարէ աւգնել՝ ապաւինեցաւ (Մ 41.20, Բ 86, ԱԷԲ):

Յօդուածագիրը հաղորդում է, թէ Ե. Գուրեանը Եզնիկի նախադասութեան «արժանիցն» բառը, որ ձեռագրային է, առաջարկել է կարդալ «անարժանիցն», իսկ Զմիւռնիայի հրատարակութեան մէջ եղել է «արժանեացն»: Գ. Պաշտուրեանի բնագրի մասին որոշակի բան ասուած չէ. նա բնագրում թողել է «արժանիցն», սողատակում նշել է Ե. Գուրեանի սրբագրութիւնը եւ թարգմանել ըստ այնմ (էջ 42): Ա. Աբրահամեանը պնդում է, որ «Այստեղ իրականում գործ ունենք արժան բառի հետ, որի բնագրային արժանիցն ձեւը փոփոխութեան կարիք չի զգում, եւ նրան չպէտք է ձեռք տալ» (98): Նա թերացել է ասել, որ իրենից առաջ Մարիէսը այդ բառին ձեռք չի տուել», թողել է ձեռագրային ընթերցուածը, այս մասին ասանց յօդուած գրելու կամ ծանօթութիւն տալու: Սակայն Մարիէսն այդ բառը թարգմանել է իր սովորական իմաստով՝ «a qui le meritent» (նրանց, որոնք դրան արժանի են, էջ 47), իսկ Ա. Աբրահամեանն այդ բառն «ընկալել է մի իւրայատուկ իմաստով» եւ ամբողջ նախադասութիւնը «մեկնաբանել է» ըստ այնմ: Այդ իմաստը նա «արժանի» բառի տակ գտել է Նոր Հայկազանի բառարանում, ուր «արժան» բառի «իրաւունք, օրէնք, արդարութիւն» նշանակութեան համար իբրեւ վկայութիւն է բերուած Եզնիկի մեզ հետաքրքրող նախադասութիւնը: Եւ Ա. Աբրահամեանը «չբաց վրայ էլ կանգ է առել առաջադիր նախադասութիւնը բացատրելիս. Եւ այն յԱստուծոյ արժանիցն յիրաւի լինի = Այն, իս»

կապէս, Աստու օրէնքներով է լինում» (98) : Ինչպէս ինքն է վարդապետում  
 «պէտք է» ձերով, քնադրի «Աստուծոյ» Հորովածեւը Համարել է սեռական՝  
 յատկացուցիչ «յարժանիցն» յատկացեալի Համար, որ թէեւ բացատրական է,  
 բայց նա թարգմանել է գործիականով : Սակայն դժուար չէ նկատել, որ ամ-  
 բողջ բացատրութեան բուն հեղինակը Նոր Հայկազեան Բառարանն է իր «ար-  
 ժան» բառի վերոյիշեալ բացատրութեամբ :

«Արժանիցն» Հորովածեւի մեկնաբանութեան հարցում մենք չենք ըն-  
 դունում Նոր Հայկազեան Բառարանի եւ դրան հետեւող Ա. Աբրահամեանի  
 կարծիքը եւ համաձայն ենք Մարիէսին : Յիշեցնում ենք նրա թարգմանու-  
 թիւնը. «Et cela, de par Dieu, a qui le meritent, avec justice arrive» («Եւ դա  
 Աստուծոց արդարացիօրէն լինում է նրանց, որոնք (դրան) արժանի են») :  
 Կարծում ենք, որ այս է Եզնիկի մտքի ճիշդ թարգմանութիւնը : Նախադա-  
 սութեան «այն» ենթակայի տակ Եզնիկը նկատի է ունեցել անմիջապէս նա-  
 խորող տողը, որ նրա գաղափարական հակառակորդների կարծիքն է. «Ա-  
 սեն. Հանել չկարին (կասարդք զԵւս — Մ. Մ.), բայց անդէն կապել մար-  
 թեն, զի Հանապաղ խեղդ ընդ անձն Հոգւոյ մարդոյն դեւն լինիցի» (Մ 41.18,  
 Բ 86 Ակբ) : Եզնիկը շատ լաւ գիտէր անշուշտ, որ Հակառակորդների արտա-  
 յայտած այս միտքը Աստու օրէնքներով չի լինում աստուածաբանութեան  
 տեսակէտից, ինչպէս ասուածարակ դիւանագրութիւնը. ուստի նա չէր կարող  
 այստեղ «արժան» բառը դործածել «օրէնք, իրաւունք, արդարութիւն» նը-  
 շանակութիւններից մէկով, որն իբր միայն Եզնիկին է յատուկ : Ինչպէս պա-  
 տուհասները, այնպէս էլ դիւանագրութիւնը կարող է պատահել մեղաւորին  
 (եւ նոյնիսկ անմեղին) միայն Աստու թոյլտուութեամբ՝ «յԱստուծոյ»  
 (Աստուց), եւ ոչ թէ ինչ-որ «օրէնքներով» : Եզնիկի երկը, յատկապէս այն  
 էջերը, ուր կարդում ենք քննարկուող նախադասութիւնը, առգորուած են այս  
 գաղափարներով. «...Մտանելոյ ի մարդ (դեւն — Մ. Մ.) չունի իշխանու-  
 թիւն՝ առանց Աստուծոյ թուացուցանելոյ» (Մ 42.3, Բ 87) : Մեզ հետաքրք-  
 րող նախադասութեան շարունակութեան մէջ Եզնիկը գրել է, թէ ինչո՞ւ «այն  
 յԱստուծոյ արժանիցն յիրաւի լինի». «զի եթող ոմն զԱստուած...» եւ այլն :  
 Այդպիսինի Համար դիւանագրութիւնը արժանի պատիժ է Աստու թոյլտը-  
 ւութեամբ եւ ոչ թէ օրէնքներով (որոնց մասին լուում է Ա. Աբրահամեանը),  
 որպէսզի այդպիսին «արբովք աղաչացեալ զԱստուած՝ աւգնականութիւն զը-  
 տանէր բուժելոյ ի չարէն» (Մ 42.1, Բ 87), «...զի նորա բարերարութիւնն  
 երեւեացի» (Մ 42.21, Բ 88) :

Ա. Աբրահամեանը դարձեալ չի կարողացել ձնոր տուեալներով՝ Հիմ-  
 նաւորել արդէն ընդունուած<sup>15</sup> ընթերցուածը. ընդհակառակն, այն սխալ է  
 մեկնաբանել :

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

ՍԷՆՆԱԳԷՐ, Յրամագ  
 (Շար. 1)

15 Ինչպէս Մարիէսի գիտական բնագրում : Սակայն Ա. Աբրահամեանը այս մասին լռելի  
 է. քերեւս այն պատճառով, որ այս բանաձեւը «ժեր բանասիրութեան» չի պատկանում.  
 «Արժանիցն» բառածը —գրել է նա—, մեր բանասիրութեան մէջ տարբեր կերպ է կասկածուել  
 ու մեկնաբանուել» (97) :